ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018թ ապրիլի 12-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 5-րդ «Ա» դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Մ. Վարդանյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝՝

1. 2-րդ կիսամյակում աշակերտների առաջադիմության հարցը:
2. Ընթացիկ հարցեր

1.Լսեցին. 2-րդ կիսամյակում աշակերտների առաջադիմության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Մ. Վարդանյանը: Նա նշեց, որ առաջին կիսամյակում աշակերտների առաջադիմության արդյունքները ավելի բարձր են եղել, քան 2-րդ կիսամյակում: Որոշ աշակերտներ թերանում են դասապատրաստումներին: Կան աշակերտներ , որոնք հիվանդության պատճառով բացակայել են՝ արդյունքում իջել է դասարանի առաջադիմության մակարդակը:
Դասղեկը ծնողներին խնդրեց, որ լինեն ավելի հետևողական և ուշադիր. անեն ամեն ինչ, որ երեխաները չբացակայեն դասերից և ավելի լրջորեն պատրաստվեն, քանի որ առաջիկայում ունեն կիսամյակային ամփոփիչ գրավորներորպեսզի կարողանան լավագույնս ի ցույց դնել տարրական դասարաններում ձեռք բերած գիտելիքները:

Որոշեցին.
Լինել ավելի հետևողական և ուշադիր, որպեսզի ապահովեն բարձր առաջադիմություն :

2. Լսեցին. -2. Ընթացիկ հարցեր

Ելույթ ունեցավ դասղեկ Մ. Վարդանյանը : Նա նշեց, որ ընդհանուր առմամբ աշակերտները կարգապահ են, դասամիջոցներին դասղեկը հետևում է նրանց վարքին, աշակերտների միջանձնային հարաբերություններում որևէ խնդիր չկա:
Դասղեկը տեղեկացրեց ծնողներին, որ ապրիլի 14-ին համադպրոցական շաբաթօրյակ է լինելու և անհրաժեշտ է ծնողների աջակցությունը դասարանի մաքրման աշխատանքներին :
Խոսեցին նաև ծնողները, նրանք փաստեցին, որ երեխաները դարձել են ավելի համախմբված, կոկիկ ու պարտաճանաչ: Ծնող Անահիտ Մարտիրոսյանը շնորհակալություն հայտնեց դասղեկի կատարած հետևողական աշխատանքի համար:

Որոշեցին.
Շաբաթ օրը ճիշտ ժամանակին լինել դպրոցում և օգնել դասղեկին դասարանի մաքրման աշխատանքների կազմակերպման հարցում: Այս նպատակով վեց ծնող ցանկություն հայտնեց մասնակցել շաբաթօրյակին:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Անուշ Վարդանյան
Քարտուղար՝ Թ. Դավթյան